ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

02.12.2016 թ.
Ելք 046/116
Lusaghbyur.lori@mta.gov.am,
հեռ. 093-34-47-89

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ավագանու թիվ 27-ից 39 որոշումները:

Առդիր 18 էջ:

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

# ՈՐՈՇՈՒՄ

## 01 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 27-Ն

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1 կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով՝ Լուսաղբյուր համայնքի ավագանին

Որոշում է

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի «Համայնքի ավագանու կանոնակարգի հաստատման մասին» թիվ 13-Ն որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մադոյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
q. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

## ՈՐՈՇՈՒՄ

01 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 28

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի և 46-րդ հոդվածի պահանջներով Լուսաղբյուր համայնքի ավագանին հաստատեց համայնքի սեփականության ամենամյա պարտադիր գույքագրման արդյունքները, որի արդյունքում պարզվեց, որ ավելցուկ և պակասորդ չկան:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արզամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մադոյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 01 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 29-Ն
## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով համայնքի 2016թ. բյուջեի՝

1. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 798,0 հազար դրամ,
2. 10,03,01 ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆՔ դասակարգման 4726 հոդվածից 40,0 հազար դրամ,
3. 10,04,01 ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ դասակարգման 4729 հոդվածից 20,0 հազար դրամ,
4. 06.04.01 ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ դասակարգման 4212 հոդվածից 82,0 հազար դրամ
5. ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ դասակարգման 4221 հոդվածից 120,0 հազար դրամ
6.08.02.04 ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ հոդվածից 10,0 / տաս հազար/ դրամ
7.01.01.01 ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ դասակարգման 4217 հոդվածի տնտեսված միջոցներից 22,0 / քսաներկու հազար/ դրամ

Տեղափոխել

ա/10.07.01 ՍՈՑ.ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ դասակարգման 4729 հոդված 390,0 հազար դրամ,
բ/09.04.01 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ դասակարգման 4729 հոդված 70,0 հազար դրամ,
գ/ 04.05.01 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ դասակարգման 4264 հոդված 300,0 հազար դրամ,
դ/ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ դասակարգման 4264 հոդված 300,0 հազար դրամ:
ե/ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ դասակարգման 4819 հոդվածի 10,0 /հազար դրամ/,
զ/ նույն դասակարգման 01.01.01 ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ 4232 հոդված:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մաղոյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ **ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
Lusaghbyur.lori@mta.gov.am , Հեռ. 093-34-47-89

## Ո Ր Ո Շ Ու Մ

«01» Դե կ տեմբերի 2016 թվականի թի վ 30

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ, ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի <<Հայաստանի Հայաստանի օրենսդրությամբ Լուսաղբյուր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 16-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ, 16.2-րդ կետերով հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2016թ նոյե մ բ ե ր ի 26-ի թիվ 10 եզրակացությունը՝

**Լուսաղբյոր համայնքի ավագանին որոշում է.**

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից համայնքի նորածին երեխաների ծնողներից մեկին, համայնքի մահացած բնակիչների հարազատներին, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ | | | |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ | | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱԶԳԵՆ | | | |
| ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ | | | |

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 դեկտեմբերի 2016 թվականի N 31- Ն

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 13 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Լուսաղբյուր համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի <<Լուսաղբյուր համայնքի ղեկավարին կից, Լուսաղբյուր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>>Լուսաղբյուր համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ հաստատված կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ | | | |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ | | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱԶԳԵՆ | | | |
| ՄԱՂՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ՑԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված
Լուսաղբյուր համայնքի ավագանու
2013 թվականի նոյեմբերի 11 -ի
N 13-Ն որոշման
Հավելված
Լուսաղբյուր համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 1ի -ի
N -Ն որոշման

# ԿԱՐԳ
# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Լուսաղբյուր համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Լուսաղբյուր համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավարին) կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):

2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:

3. Խորհրդի խնդիրներն են.

1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին.

2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:

3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:

4. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհուրդը:

Կարող են ձևավորվել և գործել նաև համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների և համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների Խորհուրդներ:

5. Խորհուրդը բաղկացած է — անդամից :

6. Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է համայնքի ավագանին՝ գ) աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների (համայնքի ղեկավարի առաջարկությամբ) և ավագանու անդամների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց (համայնքում գործող ՀԿ-ների, ոչ համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների, ՀԱԽ-երի ներկայացուցիչների) ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): Ավագանին այդ որոշմամբ նշանակում է նաև Խորհրդի նախագահ և քարտուղար:

7.Համայնքապետարանի (քաղաքապետարանի) աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետներից և ավագանու անդամներից Խորհրդի կազմում ընդգրկվում են առավելագույնը Խորհրդի անդամների 40 %-ը:

Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ Խորհրդի ձևավորման մասին հրապարակային հայտարարություն տալուց 10 օր հետո: Սույն կարգով սահմանված Խորհրդի անդամների առավելագույն քանակից ավել դիմումներ ներկայացվելու դեպքում Խորհրդի անդամների ընտրությունը կատարում է համայնքի ավագանին, իսկ առավելագույն քանակից պակաս դիմումներ ներկայացվելու դեպքում Խորհրդի անդամների թեկնածուներին (նախապես նրանց տրված համաձայնության դեպքում ) առաջադրում են համայնքի ավագանու անդամները: Հնարավորության դեպքում յուրաքանչյուր թաղամասից մեկ բնակիչ ընդգրկվում է Խորհրդի կազմում:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհրդի կազմում կարող են ներգրավվել նաև մինչև երեք փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:

8. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ Խորհրդի առնվազն -- անդամ:

9. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից:

10. Խորհուրդը նախագահում է համայնքի ղեկավարի տեղակալը կամ խորհրդականը կամ օգնականը կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Խորհրդի քարտուղար կարող է լինել համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ աշխատակիցը:

11. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է ------------ փող. ---- հասցեում գտնվող համայնքի քաղաքապետարանի (գյուղապետարանի) վարչական շենքում, եթե համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի ընդունվել:

12. Խորհրդի նախագահի որոշմամբ Խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

13. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

14. Խորհրդի նախագահն իրականացնում է Խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը:

15. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում է Խորհրդի նիստերը,

2) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,

3) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը:

16. Խորհրդի քարտուղարը փոխարինում է Խորհրդի նախագահին նրա բացակայության ժամանակ:

17. Խորհրդի քարտուղարը՝

1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի հաստատմանը,

2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը, ապահովում է մասնակիցների ներկայությունը,

3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,

4) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

18. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում՝ Խորհրդի որոշմամբ, մասնավորապես եթե .

1) 2 անգամից ավելի թույլ չի տալիս Խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և (կամ) խոչընդոտում է խորհրդի անդամի ելույթը,

2) առանց ձայնի իրավունք ստանալու 2 անգամից ավելի արտահայտում է իր կարծիքը,

3) որևէ այլ կերպ խոչընդոտում է Խորհրդի նիստի բնականոն ընթացքը:

19. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

20. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:

21. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:

22. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են Խորհրդի նիստերին:

23. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:

24. Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով Խորհրդի նախագահի հետ:

25. Խորհրդի նիստի օրակարգը Խորհրդի քարտուղարը ներկայացնում է Խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

26. Խորհրդի նիստի օրակարգը հաստատում է Խորհուրդը: Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ համայնքի ղեկավարի կողմից:

27. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է համայնքի գյուղապետարանի վարչական շենքում կամ համայնքի (գյուղապետարանի) պաշտոնական համացանցային կայքում (հնարավորության դեպքում):

Խորհրդի ընդունած եզրակացությունների ու առաջարկությունները հրապարակվում են ամբողջությամբ:

29. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:

30. Խորհրդի անդամ չեն կարող լինել

1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,

2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

31. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան Խորհրդի կազմից հանելու մասին համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը

1) դիմում է ներկայացրել Խորհրդից դուրս գալու վերաբերյալ,

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի նիստերի աշխատանքին,

4)ստացել է այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը Խորհրդում,

5) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,

6) նա մահացել է,

7) անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

32. Եթե Խորհրդի անդամի(ների) լիազորությունների դադարեցման հետևանքով անհնարին է դառնում Խորհրդի հերթական նիստերի անցկացումը, ապա Խորհրդի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ հարցը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են Խորհրդի մնացած անդամները և Խորհրդի նախագահը: Տվյալ արձանագրությունը ներկայացվում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը սույն կարգով սահմանված կարգով սկսում է նոր Խորհրդի ձևավորման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ստորագրություն — Ա. ՀԱԿՈԲՅԱՆ (Անուն ազգանուն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am, հեռ. 093-34-47-89

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» Դեկտեմբերի 2016 թվականի N 32-Ա

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 54-րդ կետի 1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ հոդվածով

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Լուսաղբյուր համայնքի ղեկավարին կից համայնքի քառամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման հանրային քննարկման, իրականացման և վերահսկման ) խորհուրդ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հակոբյան Արամայիս համայնքի ղեկավար,
Քարտուղար՝ Դուրգարյան Անահիտ գ/պ երկրորդ կարգի մասնագետ
Տեղակալ՝ Հովհաննիսյան Ալինա գ/պ առաջին կարգի մասնագետ
Դանիելյան Արգամ ավագանու անդամ
Հակոբյան Վազգեն ավագանու անդամ
Գևորգյան Լարիսա ավագանու անդամ
Շմավոնյան Աշոտ համայնքի բնակիչ
Կարապետյան Էդգար համայնքի բնակիչ
Խաչատրյան Սեյրան համայնքի բնակիչ

2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մարդյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am, հեռ. 093-34-47-89


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» Դեկտեմբերի 2016 թ վ ա կ ա ն ի N 33 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով.

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Լուսաղբյուր համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և հանձնաժողովների անհատական կազմում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին

1. Դանիելյան Արգամ Լևոնի
2. Գևորգյան Լարիսա Աշոտի
3. Հակոբյան Վազգեն Սամվելի

2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի 38-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մաղոյան Գարիկ | | | |
| Ցալոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am, հեռ. 093-34-47-89

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» դեկտեմբերի 2016 թվականի N 34-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԱԾՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ, ԿԵՐԱԿՐՈՂՆԵՐԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՅԼ ԽԱՎԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով համայնքի ավագանու 2014թ-ի թիվ 16-Ա որոշմամբ.

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ կազմել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Հակոբյան Արամայիս համայնքի ղեկավար,
2. Դուրգարյան Սևադա համայնքապետարանի ծառայող [illegible],
3.Հովհաննիսյան Ալինա համայնքապետարանի ծառայող առաջին կարգի մասնագետ,
4.Դանիելյան Արգամ ավագանու անդամ,
5 Գևորգյան Լարիսա ավագանու անդամ,
6. Խաչատրյան Սերյոժա համայնքի բնակիչ,
7.Կարապետյան Էդգար համայնքի բնակիչ,

2. Հանձնաժողովին ստացված դիմումները քննարկել համայնքապետարանում դրանք մուտքագրվելուց հետո 7 օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և նպատակահարմարության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

3. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի 37-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | [signature] | | |
| Դանիելյան Արգամ | [signature] | | |
| Հակոբյան Վազգեն | [signature] | | |
| Մաղոյան Գագիկ | [signature] | | |
| Յայլոյան Գագիկ | [signature] | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար [signature] Ա. Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am, հեռ. 093-34-47-89

# ՈՐՈՇՈՒՄ

«01» դեկտեմբերի 2016 թվականի N 35

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ>> ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 22.06.2006 թվականի թիվ 922-Ն որոշմամբ, լուսաղբյուր համայնքում խնամակալության և հոգաբարձության հարցերը պատշաճ ձևով լուծելու և այս բնագավառում պետության կողմից պատվիրակված լիազորությունները իրականացնելու նպատակով .

**Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Լուսաղբյուր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հակոբյան Արամայիս համայնքի ղեկավար,
Քարտուղար՝ Դուրգարյան Անահիտ գ/պ երկրորդ կարգի մասնագետ
Անդամներ՝ Քոչարյան Սուսաննա դպրոցի տնօրեն
Մկրտչյան Գոհար մանկավարժ

2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 39 որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մաղոյան Գարիկ | | | |
| Ցալյոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

# ՈՐՈՇՈՒՄ

**01 դեկտեմբեր 2016 թվականի թիվ 36_Ն**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի գյուղական համայնքի 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությու պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 27- Ն որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մադոյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ __________ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով քվեարկումից և առաջնորդվելով « Տեղական ինքնա-կառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8 - կետի պահանջներով Լուսաղբյուր համայնքի ղեկավարի վարձատրության չափը

Լուսաղբյուր համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է`

1. Հաստատել Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ղեկավարի ամսեկան աշխատավարձի չափը 330. 000 (երեք հարյուր երեսուն հազար) դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2016թ-ի օգոստոսի 1-ի թիվ 18 որոշումը;

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ | [signature] | | |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ | [signature] | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱԶԳԵՆ | [signature] | | |
| ՄԱՂՈՅԱՆ ԳԱՐԻԿ | [signature] | | |
| ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ | [signature] | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար ______ Ա. Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

# ՈՐՈՇՈՒՄ

## 01 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և << իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի ղեկավարի վարձատրության չափը և գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը :
2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 01-ի թիվ 19 որոշումը.
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից։

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՐԻՍԱ | | | |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԳԱՄ | | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱԶԳԵՆ | | | |
| ՄԱԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ՅԱՅԼՈՅԱՆ ԳԱԳԻԿ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ ________ Ա. Հակոբյան

Հաստատված է
Լուսաղբյուր համայնքի ավագանու
01.12.2016թ. թիվ 38 որոշման

## ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | հաստիքային միավորի թիվը | պաշտոնային դրույքաչափը / հազար դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 330.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 110.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 140.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 110.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 110.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 100.0 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 2 | 95.0 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Վարորդ | 1 | 90.0 |
| Հավաքարար | 0.5 | 90.0 |
| Տեխնիկական աշխատող | 1 | 90.0 |
| Ընդամենը՝ | 10.5 | 1265.0 |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am , հեռ. 093-34-47-89

## ՈՐՈՇՈՒՄ

01 դեկտեմբեր 2016 Թվականի թիվ 39- Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Լուսաղբյուր համայնքի ավագանին

Որոշում է`

1. Հաստատել Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի 2017թ-ի բյուջեն ըստ հոդվածների:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը :

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գևորգյան Լարիսա | | | |
| Դանիելյան Արգամ | | | |
| Հակոբյան Վազգեն | | | |
| Մարդյան Գարիկ | | | |
| Յայլոյան Գագիկ | | | |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար ______________ Ա. Հակոբյան